

ՊԱՏԵՐԱՆՔ
ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ֆր.

Վեցամսեայ . . . 6 ֆր.

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Երկու քիւ մէկ ծրարով
Տարեկան . . . 14 ֆր.


Վեցամսեայ . . . 7 ֆր.

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60
Վեցամսեայ 1.50 Տօյար

ԿԱՆՈՒԿ

Ծանոցման սողը
20 սանթիմ



ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՊԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՉՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

ՀԱՅԵ

Publication du journal

de vous

VARNA (bulg.)

Редакция

НАБВСТНИКЪ

Изданіе

ВАРНА

Грунтпринтер и издатель
Урбан

Ազգային Տոնին եւ բարկեղա-
նին առթիւ Շարաթ օր ԻՐԱՆԻՆԻ
չպիտի հրատարակուի :

Մեր բաժանորդներն ոչոնք
որ իրենց անցեալ տարուոյ բաժնե-
գինը չեն դրկած, ասկէ անդին թերթ
չպիտի ստանան, մինչեւ որ իրենց
պարտքը վճարեն :

ԱՆՈՐՈՇՈՒԹԵԱՆ ՍԷՃ

Ի՞նչ եղաւ Կովկասահայոց կա-
լուածներու խնդիրը :

Ի՞նչ հետեւանք ունեցաւ Կա-
թող. Պատուիրակութեան դի-
մումը մեծ պետութեանց :

Հայ ազգայնականներու մէջ, սրճա-
րանները կամ ալլուր, երբ քա-
նի մը հայ իրարու մօտ կու-
գան, գլխաւորապէս այս երկու
հարցումներն կ'ուղղուին խօսա-
կիցներու միջեւ, մի քիչ մխի-
թարական պատասխան ստանա-
լու յայտնի մտահոգութեամբ :

Ի՞նչ եղաւ կալուածներու խըն-
դիրը :

Առ այժմ եղածը սա է որ Կա-
թողիկոսին եւ Պատրիարքին խնդ-
րագրերը Չարը յանձնած է ներ-
քին գործոց նախարարին քննե-
լու եւ իր կարծիքը հաղորդե-
լու համար ն, վեհափառութեան
կայսեր, Բայց ի՞նչ պիտի ըլ-
լայ նախարարին կարծիքը. մեզ
նպատակաւ թէ աննպատակ, այդ-
անորոշ է : Միայն սա որոշ է որ
զուտ եկեղեցական խնդրի մը
քաղաքական գոյն տալով, յե-
ղափոխական օւկաններու միջո-
ցաւ Չարի կառավարութեան դէմ
բաց է թաց ապստամբութիւն.
յայտարարող տաք գլուխ երկու
հայ խմբակներու շնորհիւ Կով-
կասահայն ալ ենթարկուեցաւ
այսօր այն արիւնհեղութեանց որ
երէկ Տաճկահայուն վիճակած
էր : Պագուի եւ չրականներուն
մէջ 2000 մեռեալ եւ քանի մը
հազար վիրաւորներ ինկան անց-
եալ շաբթու մէջ՝ Ռուս կառա-
վարութենէն դուրս ելած եւ զինուած
խաւաք խուժանին հայ թաղերուն
վրայ յարձակում գործելուն հե-
տեւանքով : Սուլթանը հայերը
չարդելու քաջալերող ռուս կա-

ռավարութիւնը ի՞նչու չը քաջա-
լերէ իր հպատակ խաւանները ի-
րեն դէմ ապստամբութիւն յայ-
տարարող Հայերուն դէմ : Մենք
քանի քանի առիթներով երկու
յայտնած էինք թէ հայ տաք-
գլուխներու անխորհուրդ պող-
տուքները պատճառ կրնան ըլ-
լալ որ ռուս կառավարութիւ-
նը թնդանօթի բերնով խօսի
կովկասահայուն հետ : Ցաւ է ըսել
թէ մեր այս երկուքը իրական-
անալ սկսաւ Պագուի դէպքով,
որ կրնայ նկատուիլ «սկիզբն եր-
կանի» եւ տարածուիլ, եթէ վաղ
ընդօրոյթ կարգադրութիւն մը
չըլլայ : Բայց ո՞րու կողմէ յու-
սալ այդ բարեբար կարգադրու-
թիւնը. այս ալ անորոշ :

Ի՞նչ հետեւանք ունեցաւ Կա-
թող. պատուիրակութիւնը :

Պատուիրակութիւնը Ֆրանսայի
եւ Ամերիկայի նախարարներէն ու
նախագահներէն ընդունելութիւն
գտնելէ յետոյ, Լոնտոնի մէջ կա-
սեցաւ մնաց երկար ամիսներ ա-
ռանց յաջողելու էտուարտ թա-
գաւորէն ունկնդրութեան ըն-
դունուելու, թէեւ անգլիական
նախարարութիւնը երկու հայ
արքեպիսկոպոսները հաճութեամբ
ունկնդրելէ չը թերացաւ : «Քա-
րաքական նկատումներով», ըստ
Գրոշակի, էտուարտ թագաւորէ
ունկնդրութեան զլացումը, կե-
րեւայ թէ յուսահատեցուց երկու
սրբազանները, որոնք երկար
ժամանակ վնդիւր մէջ սպասելէ
յետոյ, առանց Պէրլին, Վիէննա
եւ Հռոմ երթալու, լուռ ու մուշ
վերադարձան իրենց վիճակները :
Ֆրանսայի եւ Ամերիկայի մէջ
կատարելապէս եւ Անգլիոյ մէջ
մասամբ յաջողութիւն ստանալէ
յետոյ, առանց միւս երեք մեծ
պետութեանց եւս զիմելու, Պատ-
ուիրակութեան յանկարծ վերա-
դարձը բնականապէս լաւ տպա-
ւորութիւն չը ձգեր հայ ժողո-
վուրդին վրայ : Արքեպիսկոպոս-
ները դեռ ոչինչ չը հաղորդեցին
հայ հասարակութեան բացի այն
տարտամ խօսքերէն՝ թէ պէտք է

մեր ջանքերը կրկնապատկենք
քաղաքակրթապէս յառաջդիմելու
եւ մեր նոր սերունդը զարգացնե-
լու ու դաստիարակելու համար :
Ո՞վ չէր գիտեր այս խրատները :
Ժողովուրդը դրական խոստումներ
կուզէր իմանալ, ինչպէս 1878ին
Պեռլինի վեհաժողովին առթիւ
հոգեւոյս ներքէս Պատրիարքի
կողմէ Եւրոպա զրկուած պատուի-
րակութիւնը յաջողած էր գտնէ
61րդ յօդուածի հանդիսաւոր խոս-
տումը բերել : Այս անգամ որ պա-
րագանքը աւելի նպատաւոր
ըլլալ կը թուէին (2) : արդեօք կա-
րելի չէ՞ր Գրաւան արքիւնք
մը ձեռք բերել : Եթէ ոչ, ի՞նչու
գիտումը կիտաւ ձգելով, այսինքն
առանց Վիէննա, Պեռլին եւ Հռոմ
եւս գիմելու Պատուիրակութիւնը
վերադարձաւ : Եթէ իր կիսատ
թողած դիմումներով պատուիրա-
կութիւնը կրցաւ որոշ եզրակա-
ցութեան մը գալ մեծ պետու-
թեանց տրամադրութիւններու
մասին եւ եթէ այդ եզրակացու-
թիւնը չէ կարող հրապարակ դնել
ինչ ինչ նկատումներով, գտնէ կը
հաճի հարկաւ զայն հաղորդել
հայ յեղափոխական կազմակեր-
պութեանց կեդրոններուն :

Իսկ մեր կարծիքը այն է թէ
Պատուիրակութիւնը ամէն պա-
րագայի մէջ, պէտք էր որ միւս
երեք մեծ պետութեանց մայրա-
քաղաքները եւս գիմէր, երբ
գեւ Սատուի մէջ նոր թափուած
արեան շագինները միմիջորակէն
չէին անհետացած : մեծ հաւանա-
կանութիւն կար որ՝ եթէ պաշտո-
նական դռներն իրեն երեսին
փակուած ալ գտնէր, զէթ հա-
յասէրներու կամ մարդասէրնե-
րու ընտիր խմբակ մը իրեն զօ-
րավիդ պիտի ըլլար, հայանպաստ
չարժումներ առաջ բերելու եւրո-
կան այդ երեք ոստաններուն մէջ
ալ : Ի՞նչ նկատում, կամ ի՞նչ
արդեւքներ Պատուիրակութեան
քայլը կասեցուցին : Այս ալ անո-
րոշ կը մնայ առ այժմ :

ՌՈՒՄԻԱ ՈՂԿԱՆԱԳՐԱԿԱՆ

Մինչ Բեզրասուրի մէջ երկիւղ
կը տիրէր թէ Մարա է ին, Ռուսիոյ
մէջ գերութեան քննութիւն տարե-
գարծին օրը, մեծ յեղափոխութիւն
մը կը ծագի, Չարը խոհեմութեւնը
ունեցաւ որ մը ստալ հրովարտակ
մը ուղղելու ներքին գործոց նախարա-
րին ալ հրովարտակով յայտարարե-
լու թէ «ստալ է ժողովուրդին վրա-
տահովութիւնը վախիւղ եւ անորմէ
ընտրուած ամենաարժանաւոր մար-
դոց կողմէ մը ընել, մ. անակցելու
համար աշխատակցութեան եւ խոր-
հրակցութեան օրհնադրական ծրա-
գիւնեւ մշակման գործին :

Միւս կողմէ Չարը նոյն հրովար-
տակին մէջ կաւեցնէ թէ, «այդ
բարենորոգումները գործադրուելու են
կայսրութեան հիմնական օրհնեցի-
անալլայ պահելով : Ռուսի, կրօն,
ճանչնալով ձեռ (նախարարին) վար-
չական վորձառութիւնը, յարմար գա-
տեցի որ մեր նախագահութեան տակ
մասնաւոր ժողով մը գումարէք,
խորհրդակցելու համար թէ ինչ քայլ
առնել պէ՞ք է որպէսզի թմաա-
ջադրած նպատակիս հասնուի :

Մեծագոյն զիջ-դ. թիւն մըն է զօր
կընէ նիքալա Բ. Չարը իր հպատակ-
ներուն այդ հրովարտակով, որ հէմը կը
դնէ Սահմանադրական Ռուսիոյ կազ-
մելու : 1905 մարտ 3ը պատմական
մեծ օր մը պիտի նկատուի սահմանա-
դրական աշխարհին համար :

Ամբողջ ռուս մամուլը, գրեթէ ա-
ռանց բողոքութեան, կը ջատագովէ
Չարին այս հրովարտակը, որով ժողո-
վուրդին բողոքանքին գունդում ապու-
ստալին քայլը կ'անուի, կրօն, եւ
յոյս կը յայտնէ թէ Չարին այս զիջ-
դութիւնը պիտի հնգաբարեցնի ժողո-
վուրդին յուզեալ մարտիկ եւ վերջ
պիտի տայ յեղափոխական շարժումին :
Յուշուարի առաջին կէսէն ի վեր
Չարսթէ Սէլօ մէջ կայսեր նախագա-
հութեան տակ գումարուած բողոքակ
ժողովներուն մէջ վերջապէս յաղթա-
կան տանողը ազատական կուսակցու-
թիւնը եղաւ : շնորհիւ ժողովրդական
կազմակերպեալ ընդհանուր շարժու-
մներուն եւ ահաբեկչական գործողու-
թիւններու ազդեցութեան : Կր մազ-
թենք որ Սէլօն մեծ գումար վերջին
զօր ըլլար յետագիմականներուն եւ
ժողովուրդը չը հարկադրուէր ֆորմալ
զոհողութիւններով ու զոհերով պա-
ստա պատառ խելու իր իրաւունք.
նեքը յետագիմականներու ճանկելէն :



ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՊՈԼԿԱՐՆԵՐԸ ԵՒ ՄԱՆԵԴՈՒՆԻԱ

Գ.

(Շար. նախորդ թիւին)

Յոյնները մանաւորդ լաւ գիտեն իրենց թիւի պակասը եւ այդ պատճառաւ կը փութան ազգագրական հողը ձգելու, ապաստանելու համար զպրոցական հողին վրայ: Բայց հոս ալ մենք պատրաստ ենք զանոնք հետապնդելու: Իհնաւորեւ ճշգրիտ վիճակագրութիւնը մեր վարժարաններուն եւ մեր աշակերտներուն:

1. Նախնական վարժարաններ

մանչ աղջ. խոն. գմր. աշ. գմր.					
Ալանիկի					
Նահանգ	102	2	183	287	13,783
Իւսքիւպի					
Նահանգ	71	3	100	174	8,642
Մանասարի					
Նահանգ	85	11	169	258	14,273
Ընդհ. գմր.	258	16	452	719	36,698

2. Երկրորդական վարժարաններ

մանչ աղջ. խոն. գմր. աշ. գմր.					
Ալանիկի					
Նահանգ	5	2	25	32	1,073
Իւսքիւպի					
Նահանգ	4	2	10	16	813
Մանասարի					
Նահանգ	4	2	9	15	884
Ընդհ. գմր.	13	6	44	63	2,770

Ամբողջ 782 վարժարան 39,463 աշակերտներով եւ 1578 ուսուցիչներով: Եւ այդ ղեւ՝ երեք վիլայէթներու մէջ Յոյնները ունին, շատ վստահելի տեղեկութիւննց համաձայն, միայն 361 վարժարան, 23,364 աշակերտ եւ 744 վարժապետ: Նաեւ պէտք է ուշադիր ըլլալ թէ Յոյնները իրենց աշակերտներուն մէջ կը դասեն բազմաթիւ Բոցովալաններ, եւ զիսկ թէ պուլկար վճիթարաններուն ղեւ՝ հանուած զգուշացումները անվերջ եւ անհամար են: Եթէ այս երկու պարագաներն ալ ի նկատի ունենանք, պիտի տեսնէք թէ ինչ կարծէ Յունաց ինքնակոչ առաւելութիւնը դպրոցական տեսակէտով:

Զարգացման գալով, ապահով ենք թէ մենք անուշադիւն անոնց հաւասարենք: Կը մասնաւորելու թէ, ստուղիւ, Մակեդոնիոյ մէջ պուլկար փաստագրանքներու եւ բժիշկներու թիւը շատ բարձր է: Բայց սա որոշապէս յայտնի է թէ արդի պատճառը այն է որ թուրք կառավարութիւնը, համարձակ հոգի յոյն Պատրիարքարանի, կարգիլէ զարգացնող պուլկարներուն Մակեդոնիոյ մէջ մնալ եւ զանոնք կը հալածէ իրենց երկրէն ղեպի իշխանապետութիւնը: Ուր անոնք երկու հարիւր յիսուս հազարի կը հասնին: Այս արտաքրուածները, ձեզ կը վստահեցնեն որ կը ցանկան Մակեդոնիա վերադառնալ: Մենք ալ նոյնչափ կը բարեմաղթենք որ անոնք հոն վերադառնան: Բայց անոնք անտեղեակ չեն թէ իրենց ինչ բաղդ կը սպասէ հոն:

Կիւրականները ուրեմն թէ ամեն կեցովով, թէ իրաւունքով եւ թէ գործով, մենք ձեռնհաս ենք պաշտպանելու պուլկարական խնդիրը Մակեդոնիոյ մէջ: Այդ արդարութեան եւ ճշմարտութեան խնդիրն է: Եւ եթէ ոչ ուժը, զէթ քանակը իրեն նպաստաւոր է:

Այս ըսելէս ետքը, կը փութամ յայտարարել թէ մենք ո՛չ հողային ընդարձակումն կը խնդրենք, ոչ ալ մասնաւոր առաւելութիւններ յօգուտ մեր ազգայնութեան: Մենք կը խնդրենք, յաճախ գործածուած բացատրութեան մը համեմատ, ոչ թէ միայն մեզ, այլ մեր քովը ապրող ամէն ցեղերուն ու ամէն կրօններուն համար, հաւասարութեան, արդարութեան, օրինաւորութեան վարչութիւն մը: Որ երաշխաւորէ կիանքը, պատիւը ու ստացումը, որ ամէնուն ապահովեցունէ հասարակայնի գործերը վարելու օրինաւոր մասնակցութիւն մը, համեմատութեամբ ամէն մէկուն վճարած տուրքերուն: Ձեռք վարանքի նաեւ մասնաւոր թէ այժմեան վարչական բաժանումը, պարզապէս արուեստական ու կամայական, մեզի զէմ ուղղւած է եւ ուրիշ նպատակ չունի: Եթէ ոչ թրքական շահերուն ծառայել, թէ Մակեդոնիա հանազը կը պարունակէ բուն Մակեդոնիոյ մէկ մասը եւ թեւաւոր մէկ մասը: Մանասարիի նահանգը՝ Մակեդոնիոյ մէկ մասը, թեւաւոր ու Եպիրոսի մէկ մասը եւ Ալպանիոյ մէկ մասը: Իւսքիւպիի նահանգը՝ Մակեդոնիոյ մնացորդը, Ալպանիոյ մէկ մասը եւ Հին Սերպիայի մէկ մասը: Կը կարծենք որ, ատուկ, թուրք կառավարութիւնը նահանգներուն բնական, պատմական ու ազգանունական սահմանադրութիւնները փոփոխած եւ զիսկ մեր այն տեղի ժողովուրդները իրարու հետ չփոխած է: Եր կարծենք վերջապէս թէ Մակեդոնիոյ ճիշդ սահմաններն են, հիւսիսէն՝ Շար-Տաղը, արեւմուտքէն՝ Տրէն գետը, Օխրիտի ու Բիւթարայի լիճերը եւ Կրամոս լեռը: հարաւէն՝ Պիտրիցայի հովիտը: արեւելքէն՝ Բոյոն ու Օսոկովայի լեռը, որով կուսենանք չորս նահանգներ (Մակեդոնիա, Ալպանիա, Թեսալիա ու Հին Սերպիա): Եւ մենք կը պահանջենք որ բարենորոգումները, վերեւ յիշած ուղղութեան համեմատ, կանոնաւորապէս գործողութիւն այս վերակազմաւոր չլրջանակին մէջ ողջմտութեամբ ու անկեղծութեամբ:

(Շարունակելի)

ՇՈՒՂԸ

Ինչպէս շատ ազգերու՝ այնպէս ալ մեր մէջ շատ են Աշուղի սկզբնաւորութիւնն ու ընդունելութիւնը: անյիշատակ ժամանակէ մը ի վեր ճանչցուած է Աշուղի երգի կամ քնարի զօրեղ տպաւորութիւնը ժողովուրդի սրտի վրայ: Եւ ժողովուրդը մեծապէս օգտուած է Աշուղէն, եթէ այս վերջինն ունեցած է դրաւիչ ձայն, արտաբերելու հոգեմեծութիւնն ու սիրուն բանաստեղծութիւնն սիրոյ, կրօնի, ազգութեան, հայրենիքի, բարեգործութեան եւ մարդասիրութեան տարրերով ամբողջացած: Այսպիսի վրնատուած Աշուղներ, շատ վաղ գոյութիւն ունեցած են մեր մէջ, որոց գործերը կամ գործերի հատուկ տարր մասերը հազիւ հասած են հնախոյ իմաստասէրների ձեռք որոց նմոյշները երբեմն կ'երեւին Բագմալիւպի եւ Անահիտի մէջ որք անայլալ կը տոկան ամենախիտ եւ անաչառ քրիտիկոսներու յատկանշութեամբ:

Իսկ վերջնապէս յայտնի Աշուղները մէջ հազիւ կ'երեւին մէկ երկու Սէյթանովաներ կամ Աղար-Աղամներ, որք անուն մը ձգած լինին իրենց ետեւը:

Բայց ներկայիս մէջ կարելի է ըսել, թէ վերոյիշեալներու թուին ունեցող Աշուղներ ալ չեն երեւիր հրապարակի վրայ, երեւոյթ մը որ երբէ՛ք միութարական չէ մահաւանդ մեզ նման ժողովրդի մը համար:

Աշուղը երջանիկ ժողովրդի մը ուրախութիւնն է. իսկ հաւածական թափառական ժողովրդի մը միութարութիւնը, անոր սրտին միութարիչը, ցաւերու սփոփիչն ու սպեղանին, մէկ խօսքով անոր գոյութեան պահպան եւ աւետարան հրեշտակը եթէ նա՝ Աշուղը, կը կրկնեմ, ուրիշ բար կոչման համապատասխան հանգամանքը եւ յատկութիւնը:

Փետրուար 17 ի (Արեւելեան Նրեկոյթ)ին ներկայ էի Վառնայի Սահարնէի մէջ, ուր բնիկ Սեբաստացի Աշուղ Փէսէնտիի համար հաւաքած էր հայ ազգի եւ օտարազգի մի հոծ բազմութիւն, հայ տիկնիւներ եւ օրորդներ եւս պատուած էին այդ երեկոյթը, որ արագապէս սահող 3 ժամուրու միջոցին թողուց ունեւորները վրայ խոր տպաւորութիւն սիրոյ, ազգութեան եւ հայրենիքի վրայ երգուած երգերու յորդորակ եւ ազգուն շնչաւորով, եւ խնդուք ու ուրախութիւն՝ Փէսէնտիի եւ Ներանի յանապարհաստեղ հեղինակած ու երգած մրցունքներով: Աշուղ Փէսէնտի կը նուագէր սազի վրայ, իսկ ընկերը՝ Սանթուրի, երկուքն ալ Արեւելեան հին նուագարաններ. երգուեցան հայերէն եւ թուրքերէն զանազան երգեր. բայց Փէսէնտիի կրկին ծափահարուած հայերէն երգերու մէջ «հայե՛ր, հայե՛ր մտածեցէ՛ք»: Ձեր խոր քունից սթափեցէ՛ք» խօսքերու շնչուն ու արտասանութիւնը ամենազօրեղ ազգեցութիւնը թողուց ունեւորներու վրայ, որ հազիւ թէ մոռցուի. այդ ըստին կարծես սրահին մէջ մարդ չկար, մարդիկ չունչ ալ չէին աւանդ, իսկ ինքը՝ երգիչը իւր փակ աչքերով կը զրկնապատկէր իւր երգի, ձայնի եւ շնչի արտայնի ու հոգեկան տպաւորութիւնը, անէացում մը տրած էր օրանը, ուր թուրք ձայն մը կը սաւառնէր հոգիներու խորը:

Պակաս էր միայն խմբական երգեցողութիւն. որոյ արդիւնքը հանդերձ երաժշտական լրացուցիչ գործիչներով վեր է ամեն գնահատութեան, բայց այս մասին բունեցաւ թէ Պ. Փէսէնտի իրեն ընկերացող միակ անձն ալ հազիւ զբոսած է այստեղ:

Աշուղ Փէսէնտի շատ քրաւիչ ձայն եւ յուզիչ շնչաւոր մունի իւր բերին մէջ, աւելի ինքնուրոյն բանաստեղծ ու երգիչ է թուրքերէնի մէջ. ունի թէեւ մի քանի հայերէն ժողովրդական երգեր, նա չեւ երիտասարդ է. եւ ազատ է հասարակ աշուղներու ամեն ախտերէն. նա կարող է ապագային մի մեծ անուն թողուլ, եթէ կանգ չառնէ գտնուած աստիճանին վրայ:

Ծանկալի էր, որ մեր լաւ աշուղներ թիւը բազմապատկուէր: Եւ շատ բան կը յուսամ աշուղներէն:

ՊԱՊԻԿ

Ա.Զ.Ի
Պարահանգէսի, Բարեկենդանի եւ երեկոյթներու համար նատէժտաւ Հայ դիրս. խմբին կողմէն բաղմատեսակ զգեստներ դերամատչելի դնով վարձու կը տրուին փափաքողը կրնան գիտնել Սրահ Պուլկարիս:

Պ. ԷԳՆԱՆԱՆԻ ՈՐԲԵՐԸ

(Շար. նախորդ թիւէն)

Այս գործին մէջ (որ տարբի մը առաջ տեղի ունեցած է) Մեծատուրեանի ամբողջ նարազիտութիւնը կայացած է իր ցաւազար ընկերը Միւնիքի ներկայացուել իր մեծ գաղտնիքներ զիստող յեղափոխական մը:

Ինչպէս կը հասկցուի, եւրոպայի թուրք լրտեսապետը՝ Միւնիքի բաշա մեծ սիրով մատնչական այս առաջարկութիւնն ընդունած է. Դուստուհանց, ինչպէս ինքը կը խոստովանի իր նամակին մէջ, քանի մը անգամ «գեթապանէն ընդունուած» է, ու խօսքէն գործի անցնելով, մատնութեան մէջ իր անկեղծութեանը իր ցրտական: «Իր թրքերէն տառերը զեպանին թողած է»: Ողորմելին, իր միամտութեանը մէջ, կրէ թէ այդ տառերը զեպանին թողած է, վասն զի... անպէտ էին:

Տեսա՞ք որքան բարեխիտ է այս 12 տարուալ յեղափոխականը, որ իր «անպէտ» տառերը փոխանակ ազգտու հայուն մը տալու... Կերթայ իր ազգին արեւնը խմողին կուտայ:

Ձեռ գրտեր թէ ինչ վերաւորութիւն այս մատնութիւնն ունեցած է. սաշափը յայտնի է բացարձակապէս որ 1. Մեծատուրեան եղած է խնդրադիրը գրողը ու Դուստուհանցը Միւնիքին ուղարկողը. 2. Նկատելով որ թրքերէն տառերը Միւնիքի տրուած են, անպատճառ փոխարինութիւն մը եղած է. 3. Հաւանական է որ մատնչական արարք մըն ալ կայ, քանի որ յարաբերութիւնները Միւնիքի պէջի հետ այսօրան սիրալիր կերպարանք տառն են, Թէեւ որոշ բան մը գիտնալ անկարելի ըլլայ:

Ամեն պարագայի մէջ, ամեն պարկեշտ անհատի համար որոշ է որ յեղափոխական մը, եթէ նոյնիսկ «12 տարուալ գործունէութիւն ունենայ», որ «Միւնիքի պէջին կը խնդրէ որ զինքը իր ծննդավայրը զրկէ, փոխարէն յանձն առնելով թուրք ըլլալ» ինքնին իր գաւազարտութիւնը վճած կըլլայ:

Հայերը գործ չունին ասանկ սրկկայի մը հետ: Ալ ուրիշներ կրնան ըսել թէ ասանկ պաշտպան մը որբերու որչափ պատիւ կը բերէ:

Վերջապէս, Պ. Էգնանանի օրբերու գործն ալ այս խաչապոյններու ձեւը «չանթաժ» ի տիպ մըն է. զայն երեւան իրողը, առանց պատճառի Մեծատուրեանը եղած է. անոր զբոգումով իր ինքը գրաչաքը գրած է «Շարժում» ի մէջի յօդուածները: (Պ) Այդպէսով, կարծելով որ Պ. Էգնանանի անունին շուրջը բաւական ծաւր կ'աւանդեն յարուցած է, մինչ չեւ անոր պատուաւորութիւնը վրա տանգելու աստիճան, այդ «կասկածանքի միջնորդ» շահագործելու համար Մեծատուրեան շարաթափերը մը հոս հիմնեց «հերթէ է» անուանով:

Այս թերթը քանի մը օրուան գոյութիւն պէտք է ունենայ, ու միմիայն Պ. Էգնանանէն դրամ չորթիլու նպատակ ունի: Այդ թերթին մէջ Պ. Մեծատուրեան հանդիսաւորապէս գրած է թէ «Պ. Էգ-

(*) Արդէն Էգնանանէ 3 միլիոն ֆրանկ սուգանք առնելու սպասանքիքը կարգաւորու, ուշադիր ընթերցողները հասկանալ թէ «չանթաժ» իրմբ բակ մըն է Էգնանանի շուրջը գարձադը:

ԽՄԲ.

հասանքի որոշումը ինքնին վրայ քննադատական կը կատարէ ու արգելադրէ պիտի իմացնէ . » Միւս կողմէ ու այս լուրը բացարձակապէս վաւերական է . Պ . Էգնանանի պաշտօնականներէն մէկուն զգացուցած է թէ « եթէ իրեն դուստր մը չը տրուի , «Շարժումի մէջ գրուածները պիտի հաստատէ : »

Ու ճշգիւ , իր խաղը եղած է ցոյց տալ որ «Շարժումի» մէջ գրուածները բոլորովին տարբեր աղբիւրներէն են . ահա պատճառը իր ցաւագար ընկերին զանոնք գրած ըլլալ ուրախութիւն :

Այսպէսով , ինչպէս Գոյնայի ըրած է , Մեծատուրեանը կը յուսար , իր սպասուածքներով , Պ . Էգնանանի վաւերականութիւնը խոշոր գումարի մը փոխարէն իր լուսթիւնը ծախել :

Հարկ չիկայ ըսել թէ . այսօր որ խաչագողներուն բուն նպատակը երեսն էլած է , ու իրողութիւնները ճշգրտած են ու ճանցուցած , ուղղանքն զինքն ու գրել ալ կրնան :

Բ .

Ինծի կը մնայ մէկ քանի խօսք ալ իմ մասին ըսել : Խնդրով մը վերջին անգամ մը զրազելով :

1) Ղուսթիւնեանց , ճշմարիտ խնդր , կըսէ թէ իր հրամանին վրայ Պ . Էգնանանի զիս վռնած է : Ահա այս վերջինին , իր ֆիւմայովը ու գրովը , ինծի տուած «վկայագիրը» , զոր «Իրաւունք» խմբագրութեան կողմէն քննարկուած է :

Յետեւեալ կը յայտարարեմ թէ Պ . Տիգրան Էլմաստան իմ որբերու ուսուցիչ եղած է : Այ . Տ . Էլմաստան իր ուսումը կատարելագործելու համար թողուց որբերու ուսուցիչի պաշտօնը : Իր պաշտօնավարութեան միջոցին ամեն կերպով գոհ մնացած եմ իրմէն :

«Ա. Էգնանան»

Փարիզ , 10 փետր . 1905

Արգարես նոյնիմանքն ի վեր , համալսարանական վերամուտքի առթիւ որբերու ուսուցչութիւնը թո-

ղած եմ . ու «Իրաւունք» ի խմբագրութեան գրած մէկ նամակով որբերու վրայ գրածներու հետ կըսէ . «քսածներս այնքան աւելի անկողմնակալութեամբ կը գրեմ որ Պ . Էգնանանի որբերուն հետ բնաւ կապ չունիմ ալ» :

Ասկէ դատել խնդրին միւս քսածներուն ճշգրտութիւնը :

(Մնացեալը յաջորդով)

Ա Զ Գ Ա Յ Ի Ն

Բեդրսպուրկէ ԼԱՊԵՆԻՅԻ կը գրեն թէ , Տէր Ներսէս Արքեպիսկոստովէրոսեանէ և Տէր Մեօրոպ Վրդ . Մովսիսեանցէ բաղկացեալ պատուիրակութիւն մը Վեհ . կաթողիկոսին կողմէ հոն հասած է , որուն պաշտօնն է խնդրել Ներսէին գործոց նախարարութենէն որ 1903 յունիս 12ի իշխաղը ետ առնուի : Մայրաքաղաքին վերջին խռովութիւնները նախարարութիւնը չափազանց զբաղեցուցած ըլլալով , այս վերջինը չը պիտի կրնայ լրջօրէն զբաղել հայ եկեղեցւոյ գործերով . ուստի կը մնայ «յուսակ և սպասել» :

—Պօղոսի մէջ բնիկ Ամերիկացի ականաւոր անձերէ և տիւրքիներէ բաղկացեալ յանձնախումբ մը կազմուած ըլլալով , հետեւեալ զգայուն բառերով գիտած է Ամերիկացիներուն օգնելու համար Հայաստանի կարօտեալներու :

Մինչ թուրք կառավարութիւնը կը դատապարտենք իր բարբարոսութեան համար , եւ Եւրոպական Տէրութիւնները կ'այսպէս կը իրենց անտարբերութեան համար հանդէպ այս շարիքին , մենք ստորագրեալներս դիտարկելով Մշոյ եւ Սասնոյ խղճալի վիճակը , 10,000 տառապաններուն կողմանէ կը դիմենք Ամերիկեան Աղգին , որ կը վայելէ ազատութեան եւ ապահովութեան ան-

գին շնորհները : Անօթութենէ եւ մերկութենէ կորնչելու վրայ եղող արանց , կանանց եւ մանկանց ազագուր կը ծակէ մեր սիրտերը : Ի սրտէ կը հաւատանք որ առատաձեռն օգնութիւն մը պիտի ըլլայ Սասնոյ եւ Մշոյ այս տառապանքը գոնէ նուազեցնելու , եւ այդպէս շատերը փրկելու մահուան ճիւղաներէն :

—Վազուան աղգ . մեծ տոնին առթիւ տեղւոյս Աղգ . վարժարանին ուսուցչական խումբը պատրաստուած է դպրոցական հանդէս մը կազմակերպելու Ժամերգութեանց աւարտումէն յետոյ :

—Թաղ . Խուհուրդը Տէր Վահրամ քհն . Մօրընիանի քաղաքս ժամանումէն օգտուելով , խնդրած էր Պատրիարքարանէ թէ , յիշեալ քահանան մնայուն կերպով հոս հաստատուի Ղարկեան Տէր Սարգիս հօր տեղ : Պատրիարքարանը գոհացում տուած է թաղ . Խորհուրդի առաջարկին :

—Մշոյ առաջնորդարանը մասնախումբ մը կազմած է Տարնոյ արկածեալներուն բաշխելու համար այն նպատակները , որ աշխարհի ամէն կողմերէն կը հասնին Պատրիարքարան կամ գաւառ վարչութեան :

—Մշոյ Ս . կարապետ վանքին մէջ պատասպարուած 52 որբերուն և վանայ Սալնապատի վանքին 60 որբուհիներուն ապրուստը ապահովելու համար վանահայրութեանց կողմէ նպատակադրուած է :

—Վանայ Գաղ . Ժողովը հրաժարած ըլլալով , առաջ . փոխանորդը անկարող գործերը առանձին վարելու , կ'մ' նոր վարչութեան մը ընտրութիւնը և կ'մ իր հրաժարականին ընդունուիլ խնդրած է Պատրիարքարանէ :

Ն Ե Բ Կ Ա Յ Ո Ւ Մ

Մ Ե Մ Ն

ՎԱՐԳԱՆ ՄԱՍԻՍԿՈՆԵԱՆԻ

«ՆԱՏԷՃՏԱ» խումբը վազր գիւղեր «Պուրկարիա» սրահին մէջ պիտի ներկայացնէ հայ պատմութեան ամենափայլուն ու նուիրական էջերէն մին :

Խումբը կը վստահացնէ թէ երկուցորդ շքեղ ընծայելու համար բնաւ ջանք չէ խնայած : Հանգիստականները ոչ թէ միայն հաճելի երեկոյթ մը պիտի անցնեն , այլ նաեւ ազգային նուիրական հանդէս մը իրենց ներկայութեամբ պատուած պիտի ըլլան :

Ողբերգութիւնը երգարանն ըլլալէ զատ օրիորդ մը ՈՐԻՎ պիտի արտասանէ . իսկ յետոյ ծածղաշարժ զուեջտ մը պիտի ներկայացուի :

Տոմարները կը ծախուին Հայկական ընթերցարանը . իսկ վաղը իրկուսն սրահին դուռը :

Ա.Զ.Գ.

Ազգայնականութիւնը ինչպէս իրենց արարական հանած է հարստեական եւ անուան առնալով իրենց արքայական ծնի շնորհաւորական քաղցր խօսքս քաղաքիս հայ կարօտեցող , եւ կը խնդրէ որ Պատ . Ստորագրէ հաճին անոնցմէ և գործածել փոխան հետադրուի կը ծախուին ի հաշիւ ը'կերթութեան «Բարկէն Սիւնի» եւ «Հայկական» ընթերցարանները :

Գին .—Անուան առթիւ 20 սնդ . իսկ հարստիքի առթիւ 50 սնդ .

Ի դիմաց Աղգ . Բնկ . Գործ . Ժողովոյ Ատենագիրը Ատենագիրը Յ . Սպարապետ Մ . Գարագաշեան 1902 փետր . 7 Վառնա

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՆԱՆ

11

ԿԱՐՄԻՐ ԺԱՄՈՒՅ

(Շար . Կարմիր Թիւն)

Տէրտէրը իր գաղափարը պարզեց :

—Ես շատ մասնակցով համոզուեմ եմ որ , ըսաւ , մեր ազգին համար Տէր Ենովային հովանաւորութիւնը պէտք է . Եգիպտացիներուն ձեռքէն իր ժողովուրդը փրկողն ան եղաւ : Մենք ալ փառաւոտ ունինք մեր գլխուն վրայ , մենք ալ անհաւատներուն գերին ենք : Ենովային խրատներուն մտիկ ընելով պիտի ազատինք :

«Արամին երեսը կ'այլակերպէր . աչքերուն մէջ փայլ մը կը շողար , որմէն տէրտէրը ազդուեցաւ , ու քաջալերուած իր տեսութիւնները աւելի պարզեց : Տէր Ենովան իր ժողովուրդը ամանջողին գլխուն ամէն փորձանք կը բերէր : Եգիպտացիներուն զաւակներն ալ սպաննել տուաւ , անոնց ոսկեղէններն ու արծաթեղէններն ալ իւրայեղացիներուն հալալ ընել տուաւ :

Այս յիշատակներէն բոլորքուած , տէրտէրը զայրոյթի թիթեւ շնչով մը աղաղակեց :

—Հիմակ , օրհնած , դո՛ւն ըսէ , ես ժողովրդդդիւ ընտր' իւրատ տամ որ բաճկոնակդ առնո-

ղին , հանէ շապիկդ ալ տուր : Ատ նզովեալ անհաւատները շապիկներս իրենք ձեռքովն կը քաշեն կը հանեն , մեր հանել տալուն չեն ըսպասեր : Ելլեմ ժողովրդին «մո'թդ ալ տուր» պատուիրիմ' : Արդէն ա'ն ալ կ'առնեն : Երեսուր , Աստուած թող մեզ չհամարի . իմ բերանս առաջ չ'երթար ժամ եկողին խրատ տալ , որ մէկ երեսիդ զարնողին , միւսդ ալ դարձուր : Ատ շունկը մը քէֆին չեն սպասեր որ աջ կամ ձախ երեսուն զարնեն : Աջին ալ կը զարնեն , ձախին ալ կը զարնեն , քիւրնու'ս ալ կը զարնեն , կոնակնու'ս ալ կը զարնեն , սրտերնու'ս ալ կը զարնեն : Կը զարնեն , կը զարնեն , կը զարնեն : Ալ տեղ մնաց որ դարձնենք , եղբայր դո՛ւն ըսէ :

Պոլսեցի վարժապետը զգածեալ լուռ կը մնար : Աշակերտը հիմակ ինքն էր : Տէրտէրը մահմետականին ձեռքէն ոսկրոտի դարձած հայ զեղաջին կը խորհրդանշանէր :

—Այն ընդ ակա'ն , աստուծո ընդ աստուծան , ա'ն է Տէր Ենովային կամքը . եւ ես ալ ժողովրդին ասանկ կը պատուիրեմ . ինչ կ'ըսես , գէշ կ'ընեմ նէ' չիտակը զրուցէ , հարցուց քահանան :

Վարժապետը յուզուած , երկու ձեռքով տէրտէրով աջը քաշեց համբուրեց :

Այնան երկուշաբթի առտու մը Արշամ յանկարծ գեղը եկաւ : Առջի օրը քաղաք լսելու համար հոն գտնուած ըլլալուն , տէրտէրը զար-

մացաւ այս յանկարծական վերադարձին :

—Ո՛հէր ըլլայ , հարցուց :

—Սարը երթանք պատասխանեց վարժապետը :

Մէկտեղ ճամբայ իրկան :

Ա'լ շատոնց ի վեր էր որ տէրտէրը իր գրատունը թաքստոցի մէջ ծածկելու պէտք չուէր , ժամաւանդ որ գրաքանոց աստուածաշունչ մըն ալ աշխարհաբար փոխանակուած էր : Բայց սարը խորհրդաւոր Գործին էր , ուր պատանի Գաղթիլը երազած խորհած , ու մարդ եւ հայ երազ էր , Հոն կ'երթար , մենակ կ'ուր իրկնեկողովը , ամէն ատեն որ Ենովային ներշնչուելու պէտքը կը զգացուէր : Ատ օրն ալ գաղին տարին կատարը հանգիցան , սոյնանային հնչուտ տրեւով արքիւ :

—Երեսէդ կը տեսնուի որ հրճուանքի մէջ ես : Ուրախ լուրեր ունենալու ես , հարցուց տէրտէր :

Վարժապետը ծոցէն ծրար մը հանեց , թուղթի մը մէջ փաթեցուած , ու խնդալով երկնցոյց տէրտէրին , որ

—Ինչ է , հարցուց :

—Բա'ց , տես , ըսաւ :

(Շարունակելի)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԻԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԻԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄԵԾԵՐՈՒՄ

ԹԻԻՐՔԻԱ

Իւր պահարտա Պուլկարաբըն Մաքէթիանիստա եւնիտէն իս թեւալ չըգարաճաղընը պէհա- նի իտէրէք, թիւրք հիւքիւմէ թի ոլ գըթալա ասքէր նաղլի- նէ տէվալ իթմէքտէ տիր:

— Սթանպոլ ֆըրանսըզ էլչիսի Մ. Գոնսթան Բարիստէ պիր միւ- լագաթտա թիւրքիանըն Պուլկա- րիա վէ եախտ տիկէր տէվլէթ իլէ մուհարէպէյէ զըյաւ իթ- մէք իչիւն հաղըրընը ումտը- ղընը պէյան իթմիչ տիր:

— Մաքէթիանիստն 3 վիլայէթ- լէրի իչիւն էլչիլէրտէն թէր- թիպ ուլընան մալիյէ ճէտլէլի- նի Պապը Ալի գապուլ իթմէք իսթէմէյուպ, Պանգ Օթոմանա տիկէր պիր ճէտլէլ թէրթիպ իթտիրտի իսէտէ, էլչիլէրտէ պու ճէտլէլէ էհէմմիյէթ վէր- մէյորըր:

ՐՈՒՍԻԱ

Չարըն եէնի պիր իւքաղը գանուըն էսաը թէէօթի ի- չիւն տախիլիյէ նաղըրընա թա- լիմաթ վէրմիչ ումպլէ, չու կիւնիլէրտէ էհայիտէն միւնթէ- խիպ մէթէպէր զէվաթըն տա- լիլիյէ նաղըրընտան միւղէ- քէրէյէ տալէթ ուլընաճաղը պէքէնիլիյոր:

Հիւքիւմէթի զալիմէտէն իս- թիլիյա իթմէք, եախտ էհա- լիսին հուգուգընը անա թանըթ- մագ իչիւն եալընըզ գալէմ վէ լիսան բարա իթմէյուպ, պիր ազ պաղու գուվլէթի իսթի- մալ իթմէք էլչէմ ուլընընը ժէօն-թիւրք թէմմիյէ ուլընան տաւմըգըլար անլամալը տըրըր:

— Չարըն ըէյասէթի ալթըն- տա պիր ֆէվգէլատէ մէճլիս թէ ճէմմի ուլընարագ, Գուրոթաթ- քին վէ Կրիքէնպէրկ ժէնէրալ- լարը պէյնիստէ գուհուրա կէլ- միչ ուլան մալալիֆէթի թէտ- գըզ իտէճէք, վէ մուհարէպէնին ումուս ահլալի հաղգընտա միւ- ղէքէրէ իտիլէճէք ուլընընը թէ- թէրսպըրկտան իչար ուլընըյոր:

— Թիֆլիս շէհրի վէ վիլայէ- թի իչիւն իտարէի ասքէրիէ ի- լան ուլընմասը էմր ուլընընը տըր:

— Մաթպուլաթ նիզամլարընը խաֆիֆլէթմէք մագսէտի իլէ, թէշքիլ ուլընան գոմիսիօնը մախ- տուս, պուլտան սօնրա 25 եաշը- նը իքմալ իթմիչ ուլան հէր պիր իւս թապասընըն կաղէթա նէշը իթմէկէ մէզուն ումասընը թահ- թը գարարա ալմըն տըր:

ՀԸԼ ՎԱԳԱՍԸ

Րուս Պալթիկ տօնանմասը իւր գահարմանընը Հըլվագա- սը իլէ իսպաթ իթմիչ իտի, Սէ- ֆիլ պալըգը վաթօրլարընը խասարտիտէ իտէն իուս պահ- րիէսինին խաթասընը թահգիգ վէ մուհարէպէյէ իտէն պէյնէլ մի- լէլ գոմիսիօնը մախտուս րա- բօրթընը թանգիմ վէ նէշը իթ- միչ տիր: Պու րաթօրթ իւզըն, ա- միրալ Բօթտէսթվէնսքի պալըգ- ճը կէմիլէրի իւզէրիսէ աթէշ իթմէսինտէն տալըն գապահաթ- լը տաւտ ուլընմընը տըր, վէ իուս հիւքիւմէթի թաղմիհաթ էտէ- մէյէ մէճպուր տըր: Ֆագաթ թաղմիհաթըն մըգտարըն էլան թային ուլընմալըն: 100,000 լիւրա թագտիր ուլընըյոր:

Մ Ո Ւ Հ Ա Ր Ե Պ Ե

Մուգտէնէ եագըն իքի մուհա- րիպ օրտուլար պէյնիստէ ու- մուսի հիւճուս թէքըրա պաշա- մըն տըր: Շու սըրա իքի թա- րաֆտան 800,000 քիշի եէքտի- կէրինի բարէլէմէք զայրէթի վահշիանէսինտէ պուլընըյորլար, Կիճէ վէ կիւնալիպ մուհարէպէ տէվալ իսէյոր: «Ռէյլթըր»-ըն ժէնէրալ Օգուլըն օրտուսընտան մարտ 2 թարիիսի ալտընը թէ- լէկրաֆա պինտէն, ճաթօնլը- լար քէնտի գուվլէթթիւրիստէն տահա ճէսիմ պիր գուվլէթէ գարըն սիւնկիւ սիւնկիլէ ճան սիքէրանէ գալկալարտան սօնրա Աբասէ իսթիքեալարըն զապթ իթմիչլէր: ճաթօնլարըն թէլէ- ֆիաթը 2000, վէ Րուսլարըն տա- հա զիյատէ ուլուչ տըր: Շը- մէնտըքէր պոյոնտա պօմպարտը- ման տէվալ իթմէքտէ վէ չիտ- տէթիլ գար եաղմագտա ըմըն:

— Րուսթըլլէր կաղէթալար Ռէթէրսպուրկտան ալտըգըլարը մուհարէպէ հալատիսաթընա սա- հիհ նաղարը իլէ պագարագ, եէնիտէն իրի իրի տօղրամայա պաշալարըն տըրըր: կէօնա ճա- թօնլըլար սօն մուհաֆըզլարընը տալի իսթիմալ իթմէկէ մէճ- պուր ուլուչլար, վէ Գուրօ- լաթթին պու հալատիստէն ճէսարէթլէնէքէք ճաթօն օրտու- սընըն իւզէրիսէ ումուսի պիր հիւճուսլէ անլէրի չիլ եալրու- սը կիպի տաղմագտա ըմըն: ֆիլան...

Պէրիտէ իսէ Չարըն ըէյասէ- թի ալթընտա թէճէմմի ուլը- նան սօն վիւքէլա մէճլիսինտէ, մուհարէպէյէ քէմալը կէրմի ի- լէ տէվալ իթմէք վէ 400000 ասքէր տահա եալմագ իչիւն գարար վէրիլմիչ իմիչ:

— Վալտիլիօտօըն մուհասէրէ- սի իչիւն ճաթօնլարըն ոլ ճի- վարա ասքէր չըգարմագտա ոլ- տըլըն իչար ուլընըյոր:

ՍՈՆ ԹԵԼԵԿՐԱՖԻԱՐ

Սթանպոլ 21 փետր:

Սթիւպ ճիվարընտաքի Գուլա- նօվատա ախիքէն վուգու պու- լան գարընըզլըզ վէ տէսթթ վէ- քիլինին գաթիլի սէպէպի իլէ ի- քի թապուր ասքէր սէվգ ուլըն- տը:

Ինկիլիզ գըրալընըն տալէթի իլէ բըէնա Ֆէրաթիստընըն Լօն- տըրալա կիթմէսի պուրատա րահաթսըլըզ հասըլ իթտի:

Բարիլ— Պուլկարիա բըէնսի պու սապահ Մանթօնտան կէլուպ Լօնտօնա կիթտի: Բըէնսին Լօն- տրալա գապուլ ուլընմասը ըսմի սուրէթտէ վուգու պուլաճագ ը- մըն:

«Յալթ»-ըն պէյանը իւզըն, ըս- թանպոլ իւս էլչիսի պիր գաշ հարպ վաթօրլարըն պօղպտան կէշմէսի իչիւն Պապը Ալի իլէ եէ- նիտէն միւղէքէրէյէ պաշալմըն:

Բէթէրսպուրկ — Գուրօթաթ- քինին Չարա վէրտիկի թէլէկրաֆ իւզըն, Խուսիս չալընա եագըն ճաթօնլըլարըն հիւճուսընը Րուս- լար կէրի սիւրմիւշլէր: Բէշա Բուլթիլիպ վէ նօվօրատ թէրէ- լէրտէն Րուսլար ճաթօնլըլարը կէրի սիւրմիւշ 2 թօթ ալմընտը:

Մուգտէն 21 փետր— Իւչ կիւնտէն պէրու ճաթօնլըլար շէ- տիտ սուրէթտէ ճէնկլէշիօրլար Մանգաթուլը ալմագ իչիւն, ֆա- գաթ սէմէրէսիլ, գալտը: Էկէր պու մէվգըլը ճաթօնլար ալմը- լար իսէ Րուսլարըն Խուսիս չա- յընըն սաղ ճիլէթիստէ պու- լընան օրտուսընա սէքտէ վէրէ- ճէքլէր: Րուսլարա նիսպէթէն ճաթօնլարըն թէլէֆիաթը չօգ տըր:

Ումուս մուհարէպէ պու կիւն պաշալար, Գուրօթաթթին հաղըր տըր ճաթօնլարըն ուլ գօլուհա հիւճուս իթմէկ իչիւն:

Լօնտօն 22 փետր:

Պուլկարիա Բըէնսի պուրալա եէթիլտի: զէվաթը քէրամ Գը- րալ թարաֆընտան անը գար- չըլալուպ, սէրալա կէթիլարտիւ- լէր: Գրալ վէ Գրալիցա իլէ մու- հիպպանէ կէթիլալիւքտէն սօն- րա, զիյաթէթ քէշիտէ ուլընտը վէ պիր ախիքէ Գրալ վէ Գրա- լիցա Բըէնսի թէաթթօյա տա- վէթ իթտիլէր: Բըէնս Ֆէրաթի- նանա իւչ կիւնտէն Լօնտրա- տան մուֆարէքէթ իտէճէք տիր:

ԹԻԻՃՃԱՐԻՑԻ

ՎԱՌՆԱ, փետր. 23
ՉԱԽԻՐԻ

ՊՈՒՂՏԱՅ
Վալկօն 54-60 լիպ. 9.20 / 12.10
Արապա 52-62 լիպ. 9 / 12. 20
ԱՐՐԱ,
Վալկօն 100 քիւս հին 10.80/11.10
Արապա 42-45 լիպ. 6.20/6.80

ԵՌԻԱՅԱՐԱԿԱ 33/36 լիպ. 4. 60/4.80
Վալկօն 100 քիւս 10.60/10.75
ՖԱՍՈՒԼԵՍ, 100 քիւս — 25-27
Արապա 100 քիւ. 23-25
ՏԱՐԸ արապա հէքթ. 14-15
ԲՕԼՕԶ արապա 55-60 լիպ. 10.50/12
ՄԻՍԻՐ 57-58 լիպ. 7. /8.80
« 100 քիւս 11.20 - 11.90
ՉԱՎՏԱՐ արապա 8 — 8.20
« 100 քիւս 11.60/11.70

Կիւնտէ 30 — 40 Վալկօն վէ 15 — 20
արապա կէլմէքտէ: Վալկօն մուսթէլէսի նաթօլէօն 20 ֆր. արապա մուսթէլէսի նաթօլէօն 20. 20:

ՍՍՐՐԱՖԻԹԵ

Նարոլէօն 20, 20 ֆրանք
Օսմ. լիւրաը 22, 75 ալթուս ֆրանք
ՊԱԳԱԼԻԹԵ
Վարնա բիսցաթընտա պագգալիյէ մալլէլին պու կիւնքի ֆիլաթը, ալթուս ֆրանք իլէ:
ԳԱՀՎԵ 1,95/2 10
Շէֆէր նէմյէ 84
Շէֆէր քէսմէլ ոսմտըզ 43.50
Բիթիւն Ֆիլիպէ չուվալը 45.
» ճարոն » 35.
» Ինկիլիզ » 27.50
» Բիզոն » 50
ԿԱԶ, սանարըր 8. 70
Չէթթիւն հաղը քիւս 85.—1
ԳՈՒՐՈՒԼԵԳԻՐԵՄ 25

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ԹԻՒՈՒՐՏ Ա. հատոր (182 էջ) 1 ֆր.
« Բ. « [433 էջ] 2 ֆր.

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ կամ ՄՐՄՈՒՆԶ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԶ անդամ տպագ- րուած եւ ճօրագաճ. Գին 1 ֆր.

ՆԵՏԱ կը պատկերացնէ Պուլկար- նիւրու նիստ ու կացը ու թուրքիէ կրած տառապանքը անտնց ազատու- թեւէն առաջ. Գին 50 սանյիմ

ՀԱՅՐԵՆԻԹԻ ՉՈՔԵՐ Պատկեր մը Ճաճկահայաստանի իրական կեան- քէն: 2 ձեռնալ գին 1 ֆր.

Այս գրքերը ստանալու համար դիմել ՎԱՌՆԱ « Ի Ր Ա Ո Ւ Ն Ք » ի խմբագ- րութեան

ՍՕՅԻԱ Տ. Օննիկ Գարսեւանի
ՊՈՒԿՐԵՇ Տ. Օննիկ Փափաղեանի
և Տ. Յ. Պիպէնեանի

ԳՕՆՍՏԱՆԸՍ Տ. Սիսակ Մէլիքեանի
ԳԱՀՎԵՍ Տ. Կարապետ Էրզնկաթեանի
ԱՂԵՎՍԱՆԴՐԻՍ Տ. Ստեփան Մաղ- անեանի

ՈՒՍՏՐ (Ամերիկա) Տ. Յակոբ Ֆրանգ- անի
ՊՕՍԹՈՆ Տ. Ա. Ասքանազի
ՓՐՕԼԻՏԵՆՍ Տ. Մ. Տէր Պօղոսեանի
ՖԻԶՊՈՒՐԿ Տ. Կ. Մարութեանի

ԿԸ ՓՆՏՈՒՈՒԻ

Բնիկ Սերաստացի Մելքոն Ոսմո- յան ազգայինը, Պատրիարքարանի կողմանէ:

Ուստի կը խնդրուի իւր հարե- նակիցներէն ուր եթէ իւր մասին տեղե- կութիւն մունեն եւ կամ հասցէն գի- տեն, թ. դ բարեհաճին իմացնել Շուս- լա Արթ. Տ. Ոսթէն Ա. քահանայ Բիւ- չիկեանին:

ԱԶԴ

Տ. Տօք. Թորոսեան վերջնականա- պէս քաղաքս հաստատուած լի- նելով, կընդունի ամէն տեսակ հի- ւանդներ կէսօրէն վերջ ժամը 2 էն մինջեւ 4:

Տունավտօք փողոց Թիւ 3

Одговорникъ А. Курбетиянъ

печатница—«Взаимность», Варна